

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԳԲՆԱԼՐԻ “ՈՐԲԵՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ”
ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ

**ԶՈՒՂՈՒՄԸ ԵՒ
ՄԵՐ ՈՐԲԵՐԸ**



ՀԱՌ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ
ԳԲՆԱԼՐԻ “ԱՐԺՈՐԵԱՆ” ԻԱՏՐՈՆԻՆ ՄԵՋ
30 Դեկտեմբեր 1920ի զիջեր

Պ. ԹԵՈԴԻԿ-Է



ԱՄԲՈՂՋ ՀԱՍՈՅԹԸ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ



Ա. ՊՈՒԼՍ

ԳՊԱԳՐ. Կ. ԲԵՇԻՇԵԱՆ ՈՐՂԻ.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԳԵՆԱԼԸԻ “ՈՐԲԵՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ”
ԽՍ.ԱՆՍ.ՃԻՒՂԻՆ

260

**ՋՈՒԼՈՒՄԸ ԵՒ
ՄԵՐ ՈՐԲԵՐԸ**



ՃԱՌ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ
ԳԵՆԱԼԸԻ “ԱԴԱՄԵԱՆ” ԹԱՏՐՈՆԻՆ ԻՐԵՋ
30 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1920Ի ՂԻՂԵՐ

Պ. ԹԵՈԴՈՍԻԱՆ - Է



ԱՄԲՈՂՋ ՀԱՍՈՅԹԸ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ

ՀԱՅ ԳԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՒ ՅԱՍԵՆԸ

ՏՊԱԳԻՐՍԸ ԵՒ ԾԻՇԵԱՆ ՈՐԴԻ

ԱԿԱԳ ՍԵ

 Ազգ. Եղեմատական Յանձնաժողովին
կնիքը չկրող օրինակները անվաւեր են:

ՊԼՏՍ. ՀԱ. ԿԱՆ. այցելութիւն մը՝ Իշխա-
նաց Կղզիներու այս անդրանիկին, և
որտ՝ ձեր զխմացը կը գտնեմ ինքզինքս, ո՛չ
բրեւ ատենախօս, այլ հին յիշատակներ քըր-
քըրող մը՝ որ անցեալը կ'ուզէ լծօրդել ներ-
կային, մօտենալ Հայութեան քիչ որ այլ
ընտրեալ մէկ հատուածին սիրտին, հաղոր-
դուելու համար անոր ազգասիրութեամբ:

Բայց իմ գրչի եղբայրս և ձեր հայրե-
հօսկիցը, Պրն. Արշակ Ալաօյաճեան, վատ
կացութեան մը կ'ուզէ մօտենալ զիս՝ հոս
հրաւիրելով, այսինքն բեմախօսի հանգա-
մանք մը վերադրելով անա՛նկ մէկուն՝ որ
Բեմը չէ ճանչցած գրէթէ: Ահա թէ ինչո՛ւ
յօնպատրաստից խօսելու ոչ ոք պատիւէն
հրաժարած՝ ձեզի կը ներկայանամ . . . զիրով
խօսելու անփառունակ հանգամանքով, հմա-
յաթմաթի ընելու համար զիս հրաւիրողին հետ
և՛ զձեզ:

Պէտք չէ շփոթել զրոգը խօսողին հետ:
Առաջինն իր գաղափարներուն և իր վերա-
դումներուն հետ կը զիացած կ'ասարի՝ նման
խղունջին, և մօտածումի իր պրիսմակները
կը յօնձնէ թուղթին, աշխատութեան իր
տօմած սենեակին մէջ: Մենութիւնն այն
դաշտն է ուր ան իր մօտածումներուն սերմ-
նացանը կ'ընէ երկիւղած: Մինչ խօսողը,
լսուն բեմըստացը, ներշնչումի ազրիւր՝ իր
ունկնդիրներն ունի, և ամպխոնին վրայ ար-
ձանացած, երկուս գլուխներու հոծոյթին
սեւեռելով իր նայուածքը, կը բանալ չոր-

Թուճքը՝ գրոհ տալու համար իր գաղափար-
ներու հեղեղին : Բեմրասացն իր խօսքին
յաղթական գնացքը կը պարտի այն լարուած
և հիացիկ ակնարկներո՛ւն մանաւանդ՝ որոն
իր վրայ են կեդրոնացած , և ծափերը զոյ
կը խլէ ունկնդիրներէն՝ կ' պարզեւեն իրե
խանդ ու եռանդ : Ատոր հակառակ , գրողը
միակ բանը որ ունի՝ թուղթի փառքն է
տեղի շիտակ պիտի ըլլար ըսել՝ թուղթի
փառքը :

Այդ ճղճիմ , այդ ողորմուկ բեռն ահա՝
մատներու մէջ , ձեզի կը ներկայանամ ,
ճառելու համար նիւթի մը վրայ՝ որ գուցէ
հե՛շտ ալ պիտի չհնչէ ձեր ականջնիրուն : Եւ
եո, գրկուած հայ հռետորին պէս ձեր գէմքին
նայելէ , իմ՝ ներշնչումներս պիտի փնտռեմ
սուղուելով ծալքերուն մէջ մօտաւոր անցեա-
լին :



Ճամբորդ մըն եմ որ կու գամ Տաւրոսի
փէշերէն , աքտորի տարիները բոխած ըլ-
լալով փառուղիներու մէջ , վարելով լեռնցի
մարդու կեանք մը տնհամ , անհրապոյր ,
սիրելիներէ և որտակիցներէ՝ փարտախներով
հեռու , ստրկական աշխատութեան մը անխու-
ներուն լծուած , իր ձանձրոյթին , կարօտին
ու վիշտերուն սև ճախարակը գարձնելով ,
կիլիկեան Աշխարհի այդ անանուն բարձան-
ցը վրայ՝ որոնց վարերէն կը շարունակէր
անցնիլ շարանը Յեղիա աարազիր գաւառի-
ներուն , դէպ ի Այրան , Ինթիլլի , Իսլահիէ և
Մէսքէնէ երթալ հեծելու և հիւծելու համա-
շարացար . . . :

Ճամբորդ մըն եմ որ տեսու այդ ճամբ .

բուն երկայնքին՝ (զոր Գերմանին արկածախնդիր թաթը կը պեղէր, երկաթէ անվերջ գուգաճեռականը զետեղելու և Թուրքին յաղթանակը ապահովելու վարկադարազի յոյսով), հորիւրներով ու հազարներով Հայեր՝ որոնք կռուեցան հողին ու քարին դէմ, թխապարտներու հանգուռակ։ Անսուաղ, անպատուար ու կիսամերկ, տաճկահայ կարաւաններ, հետզհետէ նօսրացած շարքերով, ճապաղեցան այդ ուղիներուն վրայ, և ամիսներով ոտքը ձեռքը պագին Ալմանին ու Միւսլիմանին, չոր գլուխնուն համար դնելիք տեղ մը և պուլկուրի փիլաֆ մը ապահովելու անձուկով։ Ու մենէ եղան որ քշուեցան կրկին, տարուեցան անրնակ և անջրդի տեղաւանք, սոված անասուններու պէս իրարու մեռել կրճելու . . . :

Ճամբորդ մըն եմ որ ծայրագոյն թշուառութեան թափթփուքները տեսաւ, որ Դաւոնկեան Սուրին մշտակայ ճօճումը նշմարեց իր գլխուն վերեւ, որ գաղթականութեան ահաւորութիւնը չափեց և որ շատ հեղ Հայու ոսկորներ նշմարեց, ծործորներու և ձորերու խորքին։

Ճամբորդ մըն եմ որ ասճկըցող Հայուն հիներու հանդիպեցաւ, անբանացած հայ որբերո՛ւ ալ, որոնք, չնայելով ամենախիտաարդեւրքին, Հայու գութերնին ցոյց տուն կրկին, սովահար վիճակս ամօքելու համար։

Ճամբորդ մըն եմ, վերջապէս, զոր Ճեղին 'ի գլխի ներքնումն ի խաւարի և 'ի ոտուերս մահու», և Քրիստոսի բարեկամին նման որ իր պատանքը պատուելէն վերջ խնդալը մոռցաւ՝ որտովին բողձաց սակայն

ժպիտ տեսնել վերապրող Հայութեան դէմ-
քին վրայ . . . :

Ազգատակոծ Յեղիա քաջածնիւրուն և մա-
նաւանդ անսր ողջ մնացած բեկորներուն
շո՛ւրջ է որ պիտի դիզերիւ՝ ևս այս գիշեր ,
ցոյց տալու համար ձեզի պատկերներ՝ զորո
գծեցին անողոք մասնիւրը թուրք Բռնակա-
լութեան , Անատոլուի ծայրածաւայ կտաւին
վրայ , թուրքով ու հայհուշո՛վ գծեցին , բի-
րով ու արիւնո՛վ գծեցին , աքսորով ու
քաղցո՛վ գծեցին , որպէս զի օր մը , այդ
ոճիրներուն գինով , ախրացած ըլլային իրենց
երազած ձէննէթին . . . :

Մուշէն մինչև Բաղէշ , Խոյժէն մինչև
Բռնաշէն , Սվաղէն մինչև Տարէնտէ , Մու-
շէհիբէն մինչև Թօղաթ , Կարինէն մինչև
Բոսնն , Երզնկայէն Աղիզիէ , Չմշկածաղէն
Հիւանի Մանսուր , Պաֆրայէն Ճանիկ , Խօղա-
թէն Խարբերդ , Գալէճիքէն Կէմէրէք , Թաշ-
քէօիրիւէն Չանդըրի , Ազշէհիբէն Ըլիլն ,
Աէօլէզէն Չէնկիլէր , Եալովայէն Օվաճըդ ,
Էնկիլքին ու Խալսերին , Փոքր Ասիան ու
Սիւսեանն ամբողջ , դաւառի մեր եղբայր-
ներն ու քոյրերը ասկէ հինգ տարի տուջ
նշաւակ դարձան իրենց հարեւաններուն վայ-
րադաւթեան , և ստիպուեցան վրայ տալ
մարդկային անբռնաբարելի այն երրորդու-
թիւնը որ պարուրուած է սանուիրական բա-
ռերուն մէջ . — Պատիւ , Ինչք և Կեանք :

Մահիկը պաշտողներուն դարաւոր երա՛զն
էր որ կ'իրադրածուէր՝ Խաչը պաշտողներուն
սպառնալու անճիտութիւնով : Այդ Խաչը պաշ-
տողները , և շատ պաշտիչներն համար կար-
ծեա՛ զայն շատ շարկողները մենք էինք :
Ամէնէն կարիճները , ամէնէն յայկեանդամ-

ները, ամէնէն խեղացիները մեր եղբայրներուն դային տուայտիլ Տաճկին կառուցած զնդաններուն մէջ : Եղան որ շղթաներ ճանչցան, ուրիշներ կաթաղան, և շատեր՝ կախաղան : Արու սերունդին բռնադատվին ու բնաջնջումին կ'յաջորդէր երկարաձողում հողեվարքը մեր քոյրերուն և անոնց սիրտուն զաւակներուն : Իրենց հայրենի կտուրէն տարապարտուց վաճառւած, այդ եղիւրիներուն կարաւանները տարաղնեցան անտանակիս ճամբաներուն վրայ Արհաւիրքին որ Պօղանիիէն կ'երկարէր մինչև Կիւլէի-Պօղաղի, Նիսիսպինէն մինչև Միջագետք, Գանլը Կէչիտէն Գանլը Տէրէ, Ձէրչի Տէրէէն Առնաւուտա կտան, Մալաթիոյ ու Ավաղի ուղանդանոցները բոլոր, նաև Պէյլանի ձորն ուրուառտիլ, ուր անոնք ճանչցան իրենց ցեղին մեծ Գողգոթան : Քաղցը, բացօդեայ կեանքը, Թափառական Հրեայի անվերջ ուղևորութիւն և կիրքերու թափով տեղի ունեցող առեւանդումներ՝ հազարներ, հարիւր հազարներ զեղչեցին կենդանութեամբ ու խեղճութեամբ շողտըւած այդ կարաւաններուն շարքերէն : Երջանիկ թռչուններ ու գողաններ սրանք իրենց խնձոյքը տարքեցին՝ անոնց գիակներուն յղիութեանը մէջ . . . :



Ի՞նչ էր ռանդարամետական այդ արարքին պատճառը, աշխարհի տարեւորութիւններուն մէջ իր նախընթա՛ցը հունեցող այդ զուլումին շարժառիթը :

. . . Անէ՛ծք այն օրին՝ երբ իմ իհատ իր թաթերուն մէջ կ'առնէր Ֆաթիմի սերունդին ճակատադիրը վարելու գործը : Անկա աղ-

գայնամուլ եռանդէ մը փրփրած , պահօր-
տեցաւ Համիտլամութեան բանդապուշանքին
մէջ և ուզեց թեւատել իր շուրջի ոչ-խօլամ
տարրերէն Հա՛յը մանաւանդ զոր օժտուած
կը տեսնէր յառաջդիմութեան ու քաղաքա-
կրթութեան լոյսը այն ձիւրքերով որոնց նը-
շոյլն իսկ չի կար իրենց ազգակիցներուն քով :

Հզօր իմաստին և անտրամաբան խենթ
Հովին պայքա՛րն էր ատիկա , մղուած լապ-
տերի փեղկերէ զեռ և ու զուրկ Լոյսին դէմ
որ ստեղծագործ խն՛րքն էր Հայուն : Նախա-
փորձը կը տրուէր 909ի Կիլիկեան Նզեռնով՝
զոր հին բռնաւորի մը , տակաւին ոչ-գահա-
զուրկ Համիտի վերադրել զու՛ր փորձեց հա-
մանուն Զոլիքն Իթիօնաա : Եւ երբ Համաշ-
խարհիկ Պատերազմը պայթեցաւ և այս եր-
կիրը մնաց զերծ՝ բողոքարկու օտար միջա-
մառութենէ , Թալաթի “Լոճնէթ” կառավարու-
թիւնն ապերառա՛ն բեմադրեց իր յօրինած
ստեղծած տռամը՝ պիղծ ու մռայլ վարա-
զոյրներով :

Թրքահայութիւնը մարմնացնող դատա-
կարգային բոլոր շերտաւորումներուն մէջէն՝
հոգեւորականներ , կուսակցական դրօշի տակ
մանողներ ու կրթական գործիչներ ամէնէն
առաջ տարկայ դարձան Թուրք Բռնակա-
լութեան վաղերային ուշադրութեան : Նախ
և առաջ հարկ անհրաժեշտ էր մէջտեղէն
վերցնել զանոնք , հայ ժողովրդեան այդ ահա-
վիրաները , Հաւատքի , Խելքի ու Խօսքի այդ
թունա մարգպետները : Մնացորդին գործը
մաքրել՝ կը զիւրանար ինքնին , քանի որ
գլուխ և առաջնորդ չիկային մէջտեղ :

Այնպէ՛ս ալ եղաւ 915ի գարնան , երբ

Թուրքիա իր դիւանագիտական յարաբերու-
թիւնները խզած և հաղորդակցութիւնները
դադրեցուցած՝ թեւերը կը սօժիմէր, և Հայ
Ազգն իր հողեւոր պետին հետ կը յանձնուէր
փշոջ չորս հովերուն խաղաղիք։ — Հորիւզոնը
մէկէն ի մէկ կ'ամպտտէր։ Կեդրոնէն մինչեւ
գաւառ, հոս, հոն, ամենուրեք, մի' միայն
յայտնի ազգայիններու համար կը կազմուէին
«Տիւմանը Հարպը Էօրֆի» ներ՝ իրր զատա-
որահ, ինչ կ'ըսեմ, իրր հաւատարմական
տտեան ծառայող։ Հո'ւ էր որ բազմեցան
Օրէնքի Գիրքը նո'յն իսկ թղթատել չգիտ-
ցող զապրքաններ, խաքի հագուստով, մա-
զոտ գլուխով, սեւ մոյկերով, աչքերնուն մէջ
կայծ, կուշտերնին «պառաւնինկ» և սիրտեր-
նին դժոխք, չարչարանքներուն և մահերուն
ամէնէն տարափելիները մեծարելու համար
հայ կղերին և հայ վարժապետին, հայ վա-
ճառականին ու հայ մտաւորականին, հայ
գործիչին և հայ ուսումնականին։ Ամէնէն
կարճ ու դիւրին միջոցն ա'յլ էր ահա. շու-
ծել Հայկական անձեռակաշի եւ անկեղծանալի
Հարցը՝ Հայուն արագ բնացօնումով։

Ու կ'սկսէր դադափարատիւն խօս գոր-
ծունէութիւնը՝ մեծ մասամբ հրէադարձ Աէ-
լանիկցիներէ և ծայրայեղ ազգայնամոլներէ
կազմուած խումբէ մը՝ — շատը սարկիով ու
քիսպիկով — վաղուց մտած Union et
Progrèsի դարձածուփ դրօշին տակ։ — Պէ-
հաէտտին Շաքիր չոգեպինդ գաւառ մեկնած
էր արդէն՝ ոճրամէտ միտքերը հատունցներու,
մինչ հոս կը սողմնուէր «Թէշքիլաթը մախ-
սուսէ» ն որ ո'չ այլ ինչ էր՝ բայց եթէ պատ-
րաստութիւն հրտափումբերու, անդամա-

կցութեամբ մութ անցեալ ունեցող արիւն-
կզակ Տէրէպէյններու , էֆէներու և Ֆէ-
տայիններու : — Գիրի կ'առնուէր յետոյ ահա-
ւոր հրահանգը , հեռզհառէ գաղանաւարտ հա-
զորդուելով գաւառական ամէն անկիւն :
Ամբոխավար քարոյները կը շարունակուէին
Չարածողութներու կողմ , իրենց յարմարա-
դոյն կեդրոնատեղի ունենալով քաղաքներու
անխուսափելի «քլիւպ» ներք , նոյն իսկ
Մէսճիաններն ու Մէարէսէները : Բնազդներ
կը դրգուէին շարունակ , խղճմտանքներ
կը խմբէին մե'սօրէն , յաւնչեւ ու նուազ կը
սրուէին , փամփուշտներու տուտ համբանքը
կար ամէն տեղ , մինչ «սպալլօզուզ» ներ
մուտ կը գործէին երկիւղած՝ նոյն դրօշին
տակ : Աղօթատեղիներու բակերուն մէջ չչուկ-
ներ , շուկան , տունիւնին , «հարէմ» ներնուն
ու «ճարիւշ» ներնուն հետ , ամէնուէն հետ որ
խլամ՝ էին և ամէն տեղեր որ տածկընայ ,
խօսուած ու լսուած էր վերին պատգամը ,
հռչակումը Ճիհաաին , ալիսնքն պարզումը
Մարգարէին «մուաղլէզ» դրօշին՝ որ կը տրա-
մադրէր անպայման քայել անհաւատներուն
դէմ , Փէյղամպէրն ուրացող իրենց հարեւան-
ներուն դէմ , հա՛յ քրիստոնեաներուն դէմ ,
որպէս զի ի հարկին հաւատաւիտի կամ կե-
նազրաւ ընէին զանոնք և արանային անոնց
մային ու միւլքին :

Դալեցին ամէնքնին մէկ , հալւորէն մին-
չեւ սպամարդ՝ քալեցին անոնք մեզի դէմ :
Չրբածնէն չմնաց : Դարաբկուեցան հայ եր-
դիւքները , հայ մարաղները , հայ գոմերը ,
հայ ագարակիւները , հայ մառանները , հայ
մատուռներն ու վանքերը , հայ զպրօցնե'րը
մանաւանդ , չնչսօրէն մինչեւ անշունչ ,

կեղտի ա. ցեխի մէջ թաթխելով Հայուն դա-
բաւոր պատիւը:

Մեր հարսերէն ամենէն տեսքաները
դարդ կըսն «հարէմ» ներսւ, այրերը՝ կծիկ



Բնիկ Մարգարանցի Եր. Մելիքա *** եան հարուս
Հայունին որ Սամսոնէն Հալէպ տարագիր՝ կը մուրայ...
կծիկ բրածեծ, դաշոյնին տակ, հրազէնին
դիմաց և կառափնաւորն միայ քաւելով չդոր-

ծած մեղքերնին , երախտաներ ողջ ողջ գետա-
մոյն , խեղդամահ և հրկիզուած : Սողոմ Գո-
մո՞ր ամբողջ Անատոլուն :

Լեղո՞ւ ունենային և պատմէին ձեզի
Պոնտոսի ալիքները , կիրասոնէն մինչեւ Տրա-
պիզոն , նաև Հայաշխարհի գետերն ու առու-
ները բոլոր , թէ քանին : Բազուեցան անոնց
լոյժ տարածութեանը մէջ , թեւերնին ճիւեր-
նին ջարդուած , իրենց արիւնք խառնելով
փախչող ծփանքներուն :

Գացէ՛ք , զոր օրինակ : Մամախա-
թուն-Թերջան , տեսնելու համար այն փոփոք
լայնապեղ՝ որուն մէջ 500 տղաք իրարու
վրայ լեցուեցան և անոնց ողջ ողջ թաղումը
կոտարեցին Փէյղամպէրին շնորհունա՛կ սիրա-
կանները՝ մեծով պղտիկով : Անդին հայ դիակ-
ներով առլի Եփրատի ափունքին՝ Ծէմտուն
մըն էր որ ընտանեկան ճաշ մը սարքեց ,
վայելելու համար նախճիրի այդ տիտարանը
ներոնհան : Ուրիշ հրէշ մը , աւելի գթոտ՝
Հայ Տուռապանքին հանդէպ , օր մը կոռքով
երբ Բէմախի իր ապարանքը կ'իրթար , գե-
տեզրը խճողում մը կը նշմարէ : Եօթը հա-
րիւր ծնողազուրկ մանուկներ էին՝ ձայն ձայ-
նի տուած ճուալով , քարէն , հողէն , ջուրէն ,
ծառէն ու երկինքէն օգնութիւն հայցելով :
Ի՞նչ պիտի ըլլար այդ խեղճերուն ճակատա-
գիրը : «Կիւնա՛հ տըրլար» կը բացադանչէ ան
իր փառաշուք կառքին մէջէն և ամէնքը մէկ
գետ նետել կու տայ . . . :

Հազարէն մէկ երկուք՝ ամէնէն պղտիկ
և ա՛նչան դրուադներն են ատոնք այն եղև-
րապատում անցքերուն , որոնց ընթացքին՝
գաւառի ամբողջ Հայութիւնը տքաց թու-
րանեան ահեղ անուրին տակ , և Արհաւիր-

քէն խելայեղ՝ քթան մազով մեր մամիկները խենթեցան, մեր հարսերը արիւններ փռոխեցին ու երախաներ կաթի տեղը աղի արցունք ծծեցին: Ու Թուրքը խնդաց այնքան շատ, որքան պէտք պիտի ունենար վերջէն լալու: Գոնէ այսպէ՛ս կը տրամաբանէր տառապող ողջ Հայութիւնը՝ մեղմելու համար իր կացութիւնն անմխիթար:

Դարձաւ տարին, կը մտնէինք 916ը: Հեռուն, վիթխարի թիւի մը կը յանդէլն բեկորները տարադիր Հայութեան որ տառածուած էր Տէր Զօրի անհուն աւազուտքին մէջ: Որպէս զի աղէտն իր լրումին հասնէր, պէտք էր լուսնար Օգոստոս 25ն ալ: Վերջին վարագոյրն էր ատ՝ բեմադրուող տառամին, զանգուածային բնաջնջումովը վաթսուն հազար անպատասխար քաղցած Հայերու: Մուրաթ և Խապուր գետերը դարնանազայր մակընթացութիւն մը կ'սկսէին՝ դիակներու հեղեղներէ յղփացած: Հազարներ կորան հող հուրով և սուրով, բայց մանաւանդ վառօղով ու քարիւղով: Ինք հազար մանուկներ— յերկեմենից և ի խոնարհ— ձննձերուեցան խոտի դէզերու վրայ: Այլուր՝ աղիւսներու պէս ձեռքէ ձեռք՝ Նփրատ ձգուեցան: Հեռուն, Շէտտատիէի անձաւներուն ու խորխորատներուն մէջ՝ նաբուղոթնոտրեան փուռի ու խարոյկներ ձեւացան, որոնց մէջ Սեդրաք-Միտաքներու տեղ՝ Սիրան. Արաքոններ ածխացան: (Ի՞նչ էիր, Դաւիթ, որ ալէլու թարգմանէիր անոնց դոչերը կողկողադին) Վաւելի ներսերը, Սաֆայի և Հասիճէի կոտորածները զիր ու պատմագիր չունին. կիներու որովայններ պատուելով՝ փորտաթններու մէջ սակի փնտռող մար-

դակերպ դադաններ զործի վրայ էին , վահմակ վահմակ ունաձայն . . . :

Եւ դու , Իսրայէլի ազգին ծանօթ հին Երիքով , դադրէ՛ անապատներուդ անէծքը որոճալէ , քանի Տէյրի-Չօր մը կայ հիմա՝ որուն աւազուտ տափաստանները նոր կարմիր Ծով դարձան , և Մովսէս մը չեղաւ մեր ժողովուրդը ողջ անցունող անոր մէջէն . . . :

Քրիստոնեայ Հայաստանի պարտեալ յաղթութիւնն էր այս՝ ընդդէմ մահմէտական կրօնի որ կ'ուզէր «կեալուր էրմէնի» մը չիտղուլ իր հողին վրայ :

Աւելո՛ւն կար . հայրենի չիրիմներ տապալեցան իրենց պատուանդաններէն վար և իրենց վրայի մետրոպեան տառերը քերդուեցան : Ամէլէ Թապուրին կրեց զանոնք , ու դժնադներու բակեր և ձեմիշներ սյգ տուր մարմարներով յատակուեցան , իրր զերադոյն նախատինք Քրիստոնէութեան : Այդ մ'իւնոյն խուժանն էր որ մեր խաչերը , մասունքներն ու աւետարանները խորաններու աստիճաններէն վար առնելով՝ նետած էր աղբանոցներ ու կոյուղիներ , և ոտքերուն տակ առաթուր՝ պօռացած Հայերուս երեսին . «Եկէ՛ք աղօթիկ հիմա , Հաղթէ՛ժը Իսայի ուխտեալ հեռեւողներ . ահաւտի՛կ ձեր Աստուածն ու սրբութիւնները՝ մեր կրուկներուն տակ . . . » :

Նոր յայրմաւուրքներ , բազմահատոր նո՛ր Վարք-Սրբոցներ կարելի է լեցնել չարչարանքի այն զրուագներով՝ զոր մերսնք տարեցան , ամբսներ անվերջ արիւնէ արցունք թափելով , եղբայրանալով ցուրտին ու քաղցին հետ , մերկութեան ու չարքաւչութեան հետ , լեռներու կողին կամ դաշ-

տերու ջիւջխանքին լարուած փրցուն վրան-
ներու տակ՝ յաճախ օրհասական, այլուր
աղաքերքի ցաւեր քաշելով, իրենց մեռել-
ները թողլով անթաղ, ողջերն ալ անխնամ,
խոտ ու կեղե'ւ կրծելով և անձկազին սպա-
սելով երջանիկ, բարերար ու փրկուէ'տ
մահուան որ կ'ուշանար ու կ'ուշանար:

Ասպետական ցեղ մըն էր ան, գաւառի
տոկուն և հարազատ Հայը, որուն կը վի-
ճակուէր տեղահան ըլլալ բռնօրէն, վաչ-
կատուն թափառիլ քաղաքէ քաղաք, լեռնէ
լեռ, մազլցիլ գաւիվերներ ուր անձնիւր
քայլի՝ Սոսկումը դարանակալ կ'սպասէ,
աքսորը ճանչնալ իր է'ն ահաւոր փութերուն
մէջ և տառապէ'ս արժեցնել Սաղմոսերգութիւն
խօսքը՝ որ գուցէ ջուրի ձայն գոյ շատերու
ականջին. — «Սուրէն մոռնողները Սովէն
մեռնողներէն երջանիկ էին...»:

Քաղաքակիրթ աշխարհի առջև Հայը
լիուլի վճարած եղաւ այսպէ'ս իր արխանի
պարտքը, զո՞հ տալով սուսաւել քան մէկ
միլիոն հոգի, յագեցուցած ըլլալու համար
դժոխային ծարաւը Մօնկօյներու անողոք
Մաղոքին: Եւ մեր հարեւանները երբ ծափ
ու գափ կը զարնէին և երանութենէ երա-
նութիւն երբ կը տարուբերուէին, կը կար-
ծէին անչուշտ թէ մոխրերնիս մարած էր ի
սպառ և ա'լ սոքի ելլելիք չունէինք, թէ
իրե'նցն էր այլեւս երկիրը դրախտափայր՝
ուր երևեկի փիլիսոսին տե'ղ չունէր, և միշտ-
բէներու կատարին՝ աշխը պիտի փայլէր
միայն՝ ասմազուն երկինքն 'ի վեր...:

Թուրքին լուծը քաշո'ղը գիտէ, տա-
ռասպանքն իր միտին վրայ ու ոսկորին մէջ
զգացո'ղը գիտէ, թէ ի'նչ սիրտով և ի'նչ
շրթունքով պէտք է արտասանել մեր Սուրբ
Գիրքին սա հատուածը. — «Ո՛վ վրէժխոն-

դրութեանց Աստուածը , յայտնուէ՛ . ելի՛ր՝
ամբարտաւաններուն հատուցում ընելու :

Հայահալած այդ խուժանէն ո՛չ ոք խոր-
հեցաւ անշուշտ , թէ տապարի այն հարուած-
ները որոնք իջան Հայութեան ծառին վրայ ,
ուրիշ դեր չխաղացին , բայց եթէ յօտել ու
սլատուածատել (թէև բրաթքէն անխնայ) նո՛յն
ծառը դարաւոր : Անոր բունին քովտանքէն
ահա՛ նոր բարունակներ են չաքլեր , թէև
ոսին , աղաղուն , բայց կաւկաւսն :

Զարդուող Հայութեան զաւակներ՛րն են
ատոնք , ՄԵՐ ՈՐԲԵՐԸ մատաղատունչ ,
Զուլումի ծնունդ բոլորն ալ , անո՛նք որ
իրր Հայ Քրիստոնեայ՝ տառապանքի մկըր-
տութիւնն էին ճանչցած և ապրած լացով
ու քաղցով : Անտառներու մէջ , պախալէժժ
անդունդներու վերև , գետերու ափունքին՝
անոնք դեգերած էին , ամառ ձմեռ բոկոտն
ու . կիսամիտկ , արեւներէն էրած մրկած , ուղ-
տապանի օգնական ըլլալով Ձէչէններու
հայրենիքը , անդին՝ էշրաֆներու տուն՝
ծառայ , այլուր՝ արաք վրաններու պահա-
պան , պատու ո՛ր չոր հացի փոխարէն՝ զոր
իրենց Ազան կամ էֆէնտին պիտի նետէր
առջեւնին , դրաստունակ դատանքնին աւար-
տելէ վերջ :



Ա՛հ , մե՛ր որբերը , հա՛յ որբերը , Մեծ
Փոփոքիկէն , Տաճկաստանի Զրհեղեղէն վե-
րապրող այդ Նուեան Թունիկները , անո՛նք
որոնց աչքերը յաղնեցան երկինք նայելէն՝
տեսնելու յոյսով ծիրանի դօտին և աւետա-
ւոր ձիթէնին՝ աղաւնիի մը կտուցին . . . :

Մե՛ր որբերը , Հա՛յ որբերը , անոնք որ
Պարզև էին ու Բէրթէվ կոչուեցան , Լուսիս

էին ու Գաթմա հղան , Հայկ էին ու Գաթիդ
հղան , Արաաշ էին ու Րէչաու հղան , ալսին-
քըն հաշնոցներու մէջ հրեաւ էին ու անձ
դարձան Տաճիկներու ձեռք , և դունդա-
դունդ դային լեցուիլ երթաւ հաճանքներու մէջ ,
«Ելիֆ-պէ»ին հետ «պիտմիլլա»ին սերտելու :


Մե՛ր սրբերը , հա՛յ սրբերը , անոնք որ
յուզումով ու դողդոջուն տաքերով անցան
փլած հայ ժամերու առջեւէն , ուր ատենօք
Տէր-Պապան «կաղաղութիւն» ամենեցունքը
կ'օրհներգէր , և իրենց անկողիններուն մէջ ,
վերմակներնուն տակէն չղաղբեցան երեսին
խաչակնքելէ , իրենց ձախտին քուռած սրբ-
բալոյս Միւռնը վերջիչելով . . . :

Մե՛ր սրբերը , հա՛յ սրբերը , անոնք որ
քանի մը տարի առաջ , ձմեռ գիշերներ ,
բուխերիկին դիմաց , կ'երթային թառիկ հա-
նիին ծունկերուն , հէքիաթ մտիկ ընելու ,
յիտուլ նետուեցան վիթեպ-որջերու մէջ՝ լրբ-
բութեան դասընթացքը մորմարանքով բու-
լորելու . . . :

Մե՛ր սրբերը , հա՛յ սրբերը , անոնք որ
քարէ բարձ ունեցան յաճախ և դոմէշի
ծածկոցներ՝ իրր վերմակ , մանկութիւնն
բնեղէ խանձարութեան մէջ՝ անուշ քնքուշ
օրօրներով խուշ-քուն մրափողները բոլոր :

Մե՛ր սրբերը , հա՛յ սրբերը , անոնք որ
կորուսած եղբայրին և ասուանդ քոյրերին
օրերով երազեցին ու սգացին , մինչ , իրենց
պարլիկ խեղապատակներուն մէջ կերպով
մը չկրցան սեղմեցնել թէ կեանքի ու միջա-
վայրի լինչ սահմակեցուցիչ փոփոխութիւն
էր տեղի ունեցածը :

Մե՛ր սրբերը , հա՛յ սրբերը , անոնք որ
հէլալ կաթ էին ծծած , մայրիկի քաղցր համ-
բոյրներ վառեցած , գիթիկ գիրկ խլում , և



հիմա, բունազիրկ թռչնիկներու նման կը թռչաժէին անձանօթ հորիզոններ, անիծելով իրենց յաղնարկի տոտիկներուն համար դանուած այն թառը՝ որ երկաթի պաղու-թիւն մը սենէր:

Մեր որբերը, հա՛յ որբերը, անո՞նք որ աքաղաղի առաջին կարուսմներուն խառնուած տատենին՝ յաճախ վար կ'իջնէին սայլերէ, և գաչտերու մէջ մոլորուն, այլալնարան ու "Օ՛իածան" կը կարգային հեւ ի հեւ, այսինքն կ'ընդատացին դեպ ի մահ՝ իրենց դպրոցի դասերով...

Վերապրող այդ խլեակները մեծցան ահա հեթանոս միջնոլորտի մը մէջ՝ որ ուրացումն իսկ էր Հայուն բոլոր սրբութիւններուն:

Իրենց մաքրակենցաղ մանկութեան յիշատակները խաթարուեցան՝ ի տես այն անլուր անբարոյութեան որ հրեշտակի իրենց դէմքը ծածածուեց: Կարմրելու առաքինութիւնը զոր օրօրոյէն ստացեր էին՝ վրայ տուին հեաղհեաէ, ընկերակցութեանը մէջ հարեւան լակոսներու որոնք մարմնացումն էին անպատկառութեան ու որիկայութեան: Եւ այդ ստորաբախտ Հայորդիները հեծեցին՝ օտարութեան դիրկը յանկարծ թաւալղոր, վերակաշելով շարունակ ուղիներն իրենց սիրելիներուն, իրենց ծնողքին, իրենց քեռիներուն, իրենց հօրքոյրներուն ու մօրքոյրներուն, իրենց բոլոր մեծերուն՝ որոնք ապրեցուցեր էին զիրենք ատենօք՝ անուշ աղապատանքով մը:



Բայց պատուհաս մը, նո՛յն իսկ երկնաւոր թագաւորէն եթէ դայ, իր վախճանն տնի: Կ'ընդհատուէր յանկարծ ընդհանուր պատերազմը. թնդանօթները չէին գոտար,

Փօլիսը չէր հրամայեր ժանտարման չէր քրփ-
րեր ու խարաղանք չէր ճօճեր Հայուն վրայ ,
վասն զի Մեծ Զինագաղարն էր կնքումը ,
երեւութապէս փրկարար հանգրուանը մնա-
ցորդ Հայութեան : Ու Բռնակալութիւնն օր-
հասականի իր հռդկիւնները կ'արձակէր ,
մինչ թե ու թռիչ կ'առնէին հողիներն ա-
նո'նց որ ջուրի պէս ծարուրցեր էին Ազա-
տութիւնը :



Տառազիր Հայունիմ իր զաւկին ու բնականն

Հայութեան մաալումամ հորիզոնէն վե-
հերտ լոյս մը կը ծաթէր հիմա : Փա՛ռֆ Նա-
խախնաւնդին ուուն գոյութիւնն ա'յնքան ժրի-
տոյնէր եթէ եղած . . . :

Եւ Անատօլուի խորերէն , իւսթեաներու
եռեւէն , թուրք սրբանոցներու սրջերէն , Մի-
ջագեաքի անապատներէն , սարերէն ու ձո-
րերէն , նկուղներէն ու դսիհներէն կը սողոս-
կէր ճղճղուած բանակը թափառայած Հա-
յութեան . — Խաւարի բնակչութիւն մը ամ-
բողջ , արցունքով ու սղթով սնած :

Վերապրող Հայութիւնը վերստին կտաւան կազմած՝ կը խուժէր դէպ ի հայրենի գաւառ, իր քանդուած օճախը վերականգնելու: Նո՛ր գաղթ, ներդա՛ղթ, իբր թէ դէպ ի վերջնական փրկութիւն՝ նո՛ր քայլափոխ:

Ուրիշ կարաւաններ մեծէ ու պաշտպանէ զուրկ երկուսու մանուկներու երամներ, ու զեկորոյս ու քայլամուտը, կը դիմէին իրենց համար կարծեցեալ «Աւետիաց Երկիր»ը, Սթանպօլ, ուր երջանիկ ու կարեկցող Հայութիւն մը կար՝ իր հեռաւոր կորուստները համրող եւ սղջնրը առանջականող:

Որբանոց որբանոցի ետեւէ բացուեցան, ֆեւքեր ու գաղթականի կայաններ հաստատուեցան մայրաքաղաքիս ընդ արուարձաններուն մէջ՝ տիրող թշուառութիւնն ամուրջելու սիրտցաւ վերաբերումով մը:

Ձենէ քանիներօ՛ւն արուեցաւ սակայն երթալ տեսնել խառնազանճն այն պղտիկներուն՝ սրտնք յողնարեկ դառնուկներու նման նաւերէ: ու վախճաներէ: զուրս կը թափուէին պտտառատուն զգեստներով, աղտի ու կեղտի մէջ լողալով, ոջիկներով ու վէրքերով լեցուած, իրենց երեսներուն խնձորները դեղնած, մինինիկ թաթիկներնին կոշկոռ եւ ոտքերնին սուղուած աւֆերի հինումին անոահման կոշիկներու մէջ, չհամարձակելով նայիլ իրենց չուրջը խռնուող բազմութեան որ աղւոր ու մաքուր էր հագուեր:

Թրփատեալ Ապտուլլահներու քով կային Արուսեակներ որոնք համիններու կապոյտն տնէին իրենց թուշին եւ այտերուն վրայ: Մեծամասնութեամբ, անոնք մուսուլմաններն իրենց լեզունին եւ «ուլան Ահմէտ» կամ «զըլ Ատիլէ» կը ձայնէին իրարու: Աղջիկ-

ներէն կային՝ որ հարսնանալու տարիքը թե-
ւակոխած և կուրծքերնին քուրջերու պէս
կախ, անուանապէ՛ս էին կոյս, ա՛յնքան կա-
նուխէն և անգթօրէն պատարագուած ըլլա-
լով թուրանեան կիրքերու բազինէին վրայ :
Մանչերէն կային որ պեքեւեչանին մօտ՝
դատապարտուեր էին չկամութեամբ շաղա-
չըսիլ էջրաֆներու ցոխ աղախիններուն հետ ,
այդքան միամիտ ու մատղաշ տարիքուն
մէջ հեղելու համար չնսկան այրու բները
Տափանքի լեզուին :

Լեզէո՛ն կը կազմէր թիւը այդ անմեղ
մեղաւորներուն որոնք թուրքերու լուծին
տակ իրենց մրդուղ դոյութիւնը քաշկուտեր
էին ամիսներով և դոյ սորվեր անսովօր
սաղմոսերով թիւնը Դժոխքին , որ հայհոյան-
քով կ'սկսէր , խայտառակութեամբ վերջա-
նալու համար :

Այդ էյրաւնսներուն մէջ , նկարագի-
րով կրակուբոց հայ մանուկն՝ իբրեւ սասա
ու պատիժ՝ իր ականջները լեցուցեր էր խլմ-
ցրո՛ր ֆեսֆիւրի պէս զգուական կոչականներով
զոր Միւտիւր Պէյը կամ Մուալլիմէ Հանրո՛
էֆէնտին գիտէր յեղյիշել ի հաշկին , խորա-
պէս ճանկւտած ըլլալու համար արժանա-
պատուութիւնը՝ ծնունդով հա՛յ սրբուկին :

Ապականութեան խորխորտար ձգուած
և սողոսկելով հոնկէ դուրս ելած մեր սիր-
տին այդ հատորնե՛րն էին ահա որ Զինա-
դադարի վաղորդայնին եկան լճանալ Սթան-
պօլի սալայատակներուն վրայ , իրենց վրչ-
տաչարչար կեանքին համայնապատկերը
պարզելու Պօլսահայերուն աչքերուն :

Հիւկոյի խօսքը կը յիշեմ հիմա , Թըշ-
ուառներու հեղինակին ահաւոր խօսքը ,

որուն մէջ կարծես խառնուել ուզած է ան՝
ամբողջ իր վէպը • Ձեռք որ Մարտիոս թշուա-
սութիւնը տեսած է, բան մը չէ տեսած • պէտք
է տեսնել Կնո՛ջ թշուասութիւնը: Ով որ Կնոջ
թշուասութիւնը տեսած է, բան մը չէ տեսած, պէտք
է տեսնել Տիրուհի թշուասութիւնը: Աւելի յա-
ռաջ պիտի երթամ ետ, ըսելու համար ձե-
զի • Ձեռք որ Տիրուհի թշուասութիւնը տեսած է,
բան մը չէ տեսած, պէտք է տեսնել Հայ Ռարու-
հի՛ն թշուասութիւնը, անո՛ր որ յամբիկ մըն
էր բարեկան ու դժնիկ դարձաւ յանկարծ,
անո՛ր որ աղաւանակ մըն էր աւելաւ աղ-
ետաւ, անո՛ր որ եղնիկ մըն էր ու եղաւ թո-
ւիւն, անո՛ր—կ'ըսեմ—որ տեսաւ թէ ի՞նչպէս
իր հայրիկը սշխարի պէս ձիւղը դատ դա-
նակին տակ, անո՛ր որ սահմակած՝ դիտեց թէ
ի՞նչպէս իր հօրը դիտին անկողին ծառա-
յեց՝ իր նոր-հարս քոյրը վրան պառկեցուց-
ուելու և յադուրդ տալու ժանտարմաներու
գազանութեանց, անո՛ր որ աչքովը հետե-
ւեցաւ իր հրեշտակ քուրիկին երբ կը յափըշ-
տակուէր ան վրանաբնակ վայրենիներէ, աղա-
մանդի պէս արցունքները թարթիչներէն
կտրի և սակի հունչքով ձայնիկը հովերուն
յանձնած • ու մէ՛կը չիկար որ զինքը լսէր,
ու մէ՛կը չիկար որ զինքը փրկէր: Աչքի
տոջի բերէք անգամ մը Հայ Ռարուհին
թշուասութիւնը, անո՛ր որ իր սիրական
մայրիկին ծնողութեանն՝ օրերով քաշելէն
կի՛ստիլը տեսաւ և անօթի ծարաւ կենալէն
մամբ պէս ալ մարիլը, ապառաժի մը տոտ-
րտը սակոյէ պարկ դարձած, անո՛ր որ
պիտիւն Հայութեան բոլոր կարաւաններուն
քաղքայսիլը, կտորուիլը, կտորակուիլը
տեսաւ, և զբախն տաւ՝ զնոյց կորսուիլ

անհուն բացատառներու մէջ, ամայութեանց
գիրկը, քարայծի ու շնագայլի կեանք մը վա-
րելու, Հայուն ու Տաճկին Աստուածները
երկինքներէն վա՛ր կանչելու և ազաչելու
Անոր որ կա՛մ պատառ մը բան տար իրեն
ծամելիք, կամ հոգին տանէր ու ազատէր :

Ազատե՛ր . . . : Դժոխքին ամբողջ հեղնու-
թիւնը կայ պահուստած այս բառին մէջ .



Տարագիր Հայր՝ անապատին մէջ

ազատե՛ր . կեանքի ո՛ր երջանկութեանը
հաշուոյն . . . :

Ինչ և ապագան Հայ Որբուկին որուն
աշուրները սեասկ մը «ճօսաք» հին եղեր, այն
օրէն ի վեր որ հոն սնիրներ ու մի՛այն սնիրներ
հի՛շ չուսանկարուեր :

Ինչ խմոր ունի տղեղը Հայ Որբուկին
ուր մինչեւ այսօր կը ցանդորդեն մօտաւոր
անցեալի մը դառնութիւնները բոլոր :

Աղէտէն ազատիլը, վերապրիլը՝ լուռ
չարունակութիւնն է հին տառապանքին ,

ուր վերքերը չեն բացուիր՝ բայց կը կտտան , ուր բերանը չաղաղակեր՝ բայց կը հառաչէ :

Եթէ հարկ ըլլար երանի՝ կաղաղանո՞ւց որոնք հոյ աղտաղբութեան համար գացին ու չեկան , — մասաւորականէն բռնէ մինչև յետին մշակը ներքին զաւատներուն , եկեղեցականէն բռնէ մինչև յետին խլիակը մեր քոյրերուն ու եղբայրներուն , — կրնանք արդեօք երջանիկ յորջորջել զանոնք որ կարմիր ծովերէ լողալով անցան , և գրնդակներու անձրեւէ հեւալով փախան , որոնք ունեցան վիշտի և անձկութեան նո՞յն սկըզբնաւորութիւնն ու շարունակութիւնը , բայց որ դարձան վերտալին , այսինքն սղջ սլահեցին չոր գլուխներն :

Մեզի համար , ամենո՛ւն համար , անձնիւր վերապրող՝ կենդանի պատմութիւն է վերջին Հայ Մարտիրոսութեան զոր պարտաւոր ենք թղթատելու , զոնէ երեւակայութեամբ ապրած ըլլալու համար ցուադին կեանքը մեր եղբայրներուն ու քոյրերուն , գերեզմանէ ու տապանաքարէ զուրկ այդ եղերաբախտ էակներուն՝ որոնք իրենց մարմոքալի յիշատակը միայն թողուցին մեզի , վերապրող Հայերու :

Այլ սակայն , այդ յիշատակին չափ նուիրական և անկէ՛ աւելի բարբառուն , աւելի կենսալից՝ նորէն ՄԵՐՈՐԲԵՐԸ կան , բաց զիրքի մը սէս առաջքնիս զրուած : Պէտք է կարգաւ անոնց էջերուն (իմա՛ աչքերուն) մէջ ինչ որ կը պատմեն անոնք՝ իրենց անթարթ հայեցողութեամբ , ինչ որ մանաւանդ կ'ուզեն ու կ'ըզձան անոնք :

Մեր հոյ որբանոցներուն մէջ հիմա խճող-

ուած , կհանքայլ ու զուարթութեամբ հա-
զիւ թէ բարախուէն այդ էակները միայն հոյ
ու հաղուտտ չե՛ն ուզեր մենէ : Տէրունական
աղօթքնի՛ն անգամ մօռցող , մեծրապիան
տառերուն կարօ՛տը քաշող այդ խելակները՝
իրենց մշտքին սնու՛նդը կ'սպասեն մենէ :
Ֆիզիքական խնամքին հետ համընթաց՝ ու-
նանք պէտք ունին գոտարարակութեան ,
մաքրուելու համար այն սուտթենէն՝ զոր
թորանեան ազդը քսեց անոնց հոգիին :

Մայրիկի համընդերէ վաղուց գրկուած ,
ապաստումի անդունդին վրայ երերուն՝
թշուառն'րու այդ բանակը՝ միտքի սնուն-
դէն յետոյ՝ պէտք ունի մանաւանդ իր հոգիի՝
սնունդին որ մեր գուրդութանքը պիտի բլ-
րայ և տաքութիւնը մեր բուխտիրտ խօսքե-
րուն , որպէս զի անոր ցաւակոծ երեւակա-
յութիւնը հանգարտի և իր խոցոտ սիրտը
սպիանայ հեղհեղէ :

Ոճիրի հաւատար բան մը պիտի բլլար
եղբ երեսնուն տայինք թէ լըրճուեր , այլա-
կերպուե՛ր էին իրենք : Հայու բերնէ դուրս
ելած չեիս մը շատ ուժգին եղնդած պիտի բլ-
լար գոցուած վերքերնին : Ո՛վ պիտի յան-
դըգնէր մեղադրելու տատրակ մը որ իր ա-
զառնեւանէն հանուելով ամխանոց էր նեւ-
ուեր և իր ձիւնի պէս թեւերը մնաւած
գուրս ելեր : Ո՞վ պիտի սիրտ բնէր գանկով
նայելու իր սրտաէզի շուշանին վրայ՝ զոր
անդուծ ձեռք մը փրցնելու՛ն պէս՝ ցեխն էր
ձգեր . . . :

Վախցէ՛ք Հայ Որբս կին գոտատանէն

որ արդար զայրոյթով է թրծուած : Բան զի տեսայ անոնցմէ մին . Տ-Յ տարու աղւոր մանչ մը , որդեգիր՝ բարեկեցիկ հայ խաթունի մը որ զայն գիրկը յուած կ'ուզէր դրօսյնել՝ հէքեաթ մը պատմելով . «Մէկ կար՝ մէկը չիկար , մէկ... Ատուած - Պապա մը կար.....» : Տղան աչքերը կը բանայ և շունչը կտրած՝ կ'ընդհատէ մօրուն . «Ուրի՛շ մասալ մը , մայրիկ , աս չեմ՝ ուզեր , սուտ մասալ չե՛մ ուզեր» կազկանձելով : — «Ինչո՞ւ , սղաս» կը ձայնէ պառուը : — «Ասլամ-Պապա մը ըլլար նէ վերը , թող կու տամք որ իմ պապաս մորթուէք աչքերուս դէմը...» :

Ա՛յլ դուք որ դերծ մնացիք հայահալած քաղաքականութեան սարսափներէն , ո՛վ դուք որ տքտորի ու սուրի արհաւիրքները չապրեցաք , ո՛վ դուք որ չգլտցաք թէ ի՞նչ բան է մէկ օրէն միւս՝ անտուն-անտէր մնալը , փափուկ անկողիններու փոխան՝ ցեխի ու փոշիի մէջ պառկիլը , մոռցե՛ք այսուհետեւ այն ճշմարտութիւնը որ կ'ըսէ . «Դիւրաւ չի կրնար մարդ կարեկցիլ այն ցաւերուն՝ զորս ինք չէ կրած» :

Նս ու դուն , ինք ու մենք չի մնաց այլ եւս : Զուլումը բոլոր Հայերս եղբայրացուց իրարու հետ :

Այդ անքակտիկ սրտակցութեան անխտար ապացոյցը տուած կ'ըլլանք , երբ խօսքին հետ դործքերնի՛ս ալ խառնենք և նայինք Բախտէն այդ անժառանգներուն ա՛յն աչքով , որպէս թէ մեր ծոցածին զաւակներն ըլլային անոնք :

Չիկաց աւելի դիւրին լան մը՝ քան իր պարտքը կտտարելը, ինչպէս որ չիկաց աւելի դժուար լան մը՝ քան այդ պարտքը ճանչնալը։ Այդ դժուարութիւնն ալ վերցաւ արդէն՝ կարիքին սխալողականութեանը առջև։

Այգագային խնամատարութիւնը կը շարունակէ եղերորդեւ դատարկութիւնն իր դրամարկին, ու մեր սիրտերը կը խշխշան՝ աչքի տուչն բերելով ստուար լեզւներ մեր տնտեսական սրբերուն։

Կը հաւատամ, ազնիւ Հայրենակիցներ, որ դուք ամէնքդ ալ չէք պատկանիր մտածողներու այն դասակարգին որ կ'ենթադրէ թէ երջանկութիւնը կը կայանայ շատ ունեւնալուն մէջ։

Ա՛հ, երջանկութիւնը, մեր սիրտերու ածուին մէջ ա՛յնքան նազանքով ծլող այդ մոգական և զգայնիկ ծաղիկը։ Երջանկութիւնը—ծերին ու երիտասարդին երազներուն այդ ասանցքը—կը կայանայ չէ՛ր թէ շատ ունենալուն մէջ, երբե՛ք, այլ շատ սիրելուն մէջ, բայց մանաւանդ իր նմանը, իր թշուառ ազգակիցը սիրելուն մէջ։ Եւ ո՛վ արժանի՝ այնքան շատ սիրուելու, ա՛յնքան շատ սուտրկայ դառնալու մեր հողածութեան՝ մեր սրբերէն ՚ի դատ յանո՛նց որ հիմակուրնէ կը խորհին թէ կազանդ տ'Օնունդ կը մօտիկնան կոր, հանուր աշխարհի ալդ օրերը ցնծութեան, և իրենք ո՛չ ոք և ոչինչ տեսն իրենց շուրջ, բայց ՚ի, թերեւս, սովահար քլալու հեռագրատկերէն։

Ընտրել կը ստակայ՝ երբ մտածէ թէ կան

ա՛նա՛նկ թշուառութիւններ որոնց հանդէպ՝
իր երջանիկ ըլլալն ուրիշ բան չէ եթէ ոչ
ամօ՛թ մը : Եւ այդ թշուառութիւններէն
ամէն մէկը , — հիմա նորէն մկրտուած Հայ-
կուհիներ , Անուշաւաններ , Գեղամներ , Ար-
շալոյսներ , Պայծառներ ու Հրաշեաներ —
էին ատենօք բարեմոյն զաւակները , ընչեղ
ծնողաց , աէր՝ աղարանքի պէս տուներու ,
արտերու եւ այգիներու . ու թուշունին կաթն
անպաղա՛ս էր իրենց համար : — Սերունդն
ենք եւ մենք Արամներու եւ Թորգոմներու
այն մեծ աղբին՝ որ կտրծք տուաւ դարե-
րու անվերջ փոթորիկներուն , որ աղզայ-
նութեան գաղափարին կառչած մնաց իր
լեզուով ու կրօնքով եւ որ դիտցաւ ամէն
բանէ առաջ մոռնալ քափած ստիւնը , իր ող-
ջերը հուարաւ եւ ձեռք երկաւերաւ համար քրշ-
ուառութեամբ , ծանծաղութիւն մեջ խրած իր ազ-
գամիցներուն , Կալկաթայէն մինչեւ Նախիջե-
ւան , Կովկասէն մինչեւ Նոր Աշխարհ , Պարս-
կաստանէն մինչեւ Բիւզանդիոն , ամէն Հայ
գութի մի՛ւտենոյն զգացումովը տողարուն :

Հաւատացողներէն եմ եւ թէ Մեծ Աղէտ-
ներէն երբեմն մեծ աղբերը կը վերածնին ,
միութենական այն շարժումով սակայն որ
գիտակցութիւնն ի՛նչ է իրերօրնութեամբ : Մեր
վիշաք խորունկ է անդունդի մը չօփ . զայն
զոյցելու համար նոր վիշտեր ունենալ՝ սխալ
գաղափար է ատիկա . պէտք է հին անդուն-
դը լեցնել գիտնանք՝ ցրուած ոյժերնիս
խմբելով մեր շուրջ :

Ստանպոլցի Հայր նուազագոյն չափով



Մեծ Եղեռնի վերապրող խլեակներ

վերցուց տառապանքի իր բնոր՝ պատերազմի
ընթացքին։ Ունեցաւ պատահական կորուսու-
ներ միայն իր շարքերէն և ինչ ինչ փլու-
զումներ՝ իր զփրքերէն։ Չանդուածային բնա-
ջնջումը որ դրսեցի Հայուն սեւ ճակատադիրը
եղաւ՝ անձանօթ մնաց իրեն, և ձենէ չստեր,
հոս, մնացին անհաղորդ՝ անոնց մահապին
ստղնապներուն։

Այլ ատեն է որ բախտաւոր Պօլտահայր
թօթվէ իր վրայէն անտարբերութեան փռչին
և ջրէ իր երջանկութեան թաղարները մեր
որերուն արցունքով, տեսնելու համար թէ
ինչ ուղւոր ծաղիկներ պիտի բացուին անոնց
մէջ։ Յեղին վերածնունդն է որ պիտի բա-
կրտուած ըլլայ, երբ անտերունչ նոր սերունդը
փրկել ջանաւք և առաջնորդենք զէպ ի լոյս,
զէպ ինքնազխտակցութիւն։

Այդ քայլն առնելու համար, գիտեմ,
պէտք է յանձնառու ըլլալ ինչ ինչ զահու-
թեանց, բայց ոչ ապաքէն անարհապա-
ղարձ երևանքներ ևս որ ինչ մը սուղի կը կոտորեն
գոմարի գործովին։

Ամէն ազգերու ծանօթ Աւետարանն է
ըսողը թէ՝ «ազքատին ողորմողը փոխ տուած
կ'ըլլայ Աստուծոյ»։ Ես, դուն, ան, ամէնք-
նիս մէ՛կ բերան կը բռնուինք ու յայ անարհապա-
ղարձ երևանքներ ըսելով ակն ուրբերը՝ անսկը-
նանք։ Հայ որերուն ողորմիլը՝ նախատի՛նք
մըն է, նետուած Հայ Ազգին երեսին։ Պարս-
իս պէտք չի՝ շփոթել Շնորհիկ հետ...։

Պէտք է հոգեզուտակ ընենք զանոնք և
զազրի՛նք՝ անոնց ստղէ որք անոնք որ յաւի-

տննականն սեւ պիտակի մը պէս փակցուցեր ենք անոնց զազփառփուն դոյութեան : Աստուծոյ եր ուր տուաւ ամուսնի ծնողներն ու պաշտպանները : Ոճրատարտ ի՞նչ խմատս կայ բոնի որբորթին աստութեան մէջ՝ զոր տակաւին չէ կրցած լուծել սա իմ ցաւակոծ դատողութիւնս :

Եւ տիեզերքիս վրայ, սա կապոյտ երկինքին տակ, չիկայ էակ մը՝ ա՛յնքան լայնօրէն տարեւել իր իրաւունքին մէջ, որքան Բըւնտարտութեան լախտովր որբացած գաւառի հայ մանուկը՝ որ աշտօր մեր շուրջն է :

Ահա՛, ազնիւ Հայրենակիցներ, ես տաւրտեցի բոլորքներս, զուցէ Հարաջա՛ր իսկ գործածելով ձեր տնկնդրութիւնը, որովհետեւ գուարթ չէի ընտրած իմ նիւթս և աղէտալի անցեալին ծաղրերը քիչ մը էւելօ՛ք վեր էի առած : Բայց ետեւի, անգլիացի մեծանուն խմատատէրը, կ'ըսէ. « ինքեացութիւն է անցեալ ժամերը հարցափորձել, անոնց պատասխանը պիտի կազմէ ա՛յն՝ ինչ որ մենք փորձառութիւն կը կոչենք » :

Արդ, անցեալը վերյուզելով՝ իմ պըղտիկ փորձառութիւնս ինձ կ'ըսէ. — Հայութիւնը նորէ՛ն պիտի շտտնայ, ծլի ու ծաղկի՛ եթէ՝ վերկենք մեր որբերը : Պէտք է զուրգուրալ, ի գին ամէն զոհողութեանց, մեր որբերուն վրայ : Անո՛նք են որ պիտի կազմեն ապագայ Հայութիւնը : Վերադարձուցէ՛ք տնոնց՝ երբեմնի աշխոյժն իրենց մարմինին ու միտքին հերքչնչեցէ՛ք անոնց՝ գիտակցութիւնն իրենց կտրուած ամօթխածութեան, որովհե-

ցուցէ՛ք անոնց՝ կոյր հնազանդութիւնէն առե-
լի՝ ոէրը ժուժկալ ու դիտակից ազատութեան ,
և կոչեցէք զիրենք ուղիակի՝ փոխան ուրբուկի :
Վասն զի , Հայրենակիցնե՛ր , այդ նշխար-
ները գեհեհնեօրու մէջ իբրեւ ածուխ նետ-
ուեցան՝ ազամա՞նդ դուրս դալու համար :
Մի՛ թողուք որ պատուական ածուխը դառ-
նայ մոխիր չպիտու... :

ԹԵՂԵԿ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0533664

ՀԵՆԱ

Ելւ
185

Ս.գգ. Սրեմատիան Թանճաժողովին
կնիք չկող օրինակները անվատ է:

ԳԻՆ 25 ՂՐԸ.

